

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-1-2-Ա

ք. Երևան

08.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 8-ի նիստում քննարկեց 2023 թվականի հոկտեմբերի 6-ին արտոնագրային հավատարմատար Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության (Երևան 0061, Հրանտ Վարդանյան 33, AM) «Hello SNICKERS» (№20222505) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող՝ «SNICKERS» և «HE TOPMO3И. ЧИКЕРЧИ!» (MARS, INCORPORATED, a Delaware corporation 6885 Elm Street, McLean, Virginia 22 101-3883, U.S.A. (US), N 1041, 12.05.1997, N 15894, 09.08.2010) բառային ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող նիշերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նիշերից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված SNICKERS բառային ապրանքային նշանն ամբողջությամբ ընդգրկված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ: Ինչ վերաբերվում է կյուրեղատառ ЧИКЕРЧИ և հայտարկված նիշում ներառված SNICKERS բառերին, ապա դրանք ունեն

ծայնային նմանություն, անկախ գրելաձևի որոշ տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են բառերը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող՝ «SNICKERS» և «HE TOPMO3И. ЧИКЕРЧИ!» (MARS, INCORPORATED, a Delaware corporation 6885 Elm Street, McLean, Virginia 22 101-3883, U.S.A. (US), N 1041, 12.05.1997, N 15894, 09.08.2010) բառային ապրանքային նշաններին:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության «Hello SNICKERS» (No20222505) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ